

1940

20 JUL 2010

ՀՍՍՌ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԹԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

549
Ծ-98

Ա Ա -


Հառաւառված է

ՍՍՌՄ ժողկամուլեալին կից՝ Բարձրագույն
դպրոցների Համամիութենական Կոմիտեի
կողմից

ԾՐԱԳԻՐ

ՄԻՆԵՐԱԼՈՒՔԱՅԻ ԵՎ ԲՅՈՒՐԵԼՈՒԿԱԴՐՈՒԹՅԱՆ

Բնագիտաբայան III կուրսի և աշխարհագրաբայան I կուրսի համար



ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1940

15.05.2013



Տեղ. Խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սբագրիչ կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
վթ 2347. պատվեր 376, տիրութ 350.
Հանձնված է արտադրության 10 հոկտեմբերի 1940 թ.
Սոորագրված է տպագրության 9 դեկտեմբերի 1940 թ.

Մասկ. Խնտությունի տպարան, Երևան, Սաբբակ փ. 17.

Բ. ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱ, ԲՅՈՒՐԵԼԱԳԻՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՐՈԳՐԱՓԻԱ

I. ԲՅՈՒՐԵԼԱԳԻՑՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

1. Գաղափար նյութի ամորֆ և բյուրեղային դրույյան մասին

Գաղափար բյուրեղի մասին, որպես համասեռ վեկտորիալ կարծր մարմնի մասին: Ամորֆ մարմնի տարրերությունը բյուրեղից: Մանոթություն բյուրեղի ֆիզիկական հատկությունների հետ, որոնք ապացուցում են նրա վեկտորիալականությունը (թերթականություն, հարվածի ֆիզուրները, աճման բազմանիստները և այլն): Տարրածական ցանց:

Բյուրեղագրության որոշումը որպես գիտություն՝ նյութի կարծր գրության մասին: Նրա կազմը քիմիայի, ֆիզիկայի, միներալոգիայի և գեոլոգիայի հետ: Սոորագաժանումներ՝ երկաչափական, ֆիզիկական և քիմիական: Բյուրեղագրության գործացման կարևորագույն փուլերը:

2. Բյուրեղագրության երկրաչափական հիմնական օրենքները

Նիստային անկյունների մշտականության օրենքը և նրա գործնական նշանակությունը: Նիստային անկյունների չափելու մեթոդը (գաղափար կիրառական և անդրադարձական անկյունաչափերի մասին):

ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՅԱՆ ԲՅՈՒՐԵՂԱԳԻՑՈՒԹՅՈՒՆ

Գաղափար սիմետրիայի և նիստերի սիմվոլների մասին: Սիմետրիայի տարրերը՝ կենտրոն, հարթություն, սիմետրիայի շրջադարձի և հայելիաշրջագարձային առանցքը: Կոորդինատ առանցքներ: Բյուրեղագրական տուանցքներ: Ամբողջ թվերի

օրենքը: Նիստերի սիմվոլները: Սիմեոնիայի տարբերին մողելաներով ծանոթանալու վարժություններ:

Գաղափար սինգոնիայի մասին: Խորանարդ սինգոնիա: Խորանարդ օկտակոպր Պարզ ձեռք և կոմքինացիաներ: Խորանարդի նիստերի և օկտակոպրի սիմվոլների որոշումը: Շեղանկյուն դողեկահղութը: Տեսրագոն արիօկտակոպր: Պենտագոնոկտականը: Տեսրակոպր: Խորանարդ սինգոնիայի կոմքինացիաներ: Խորանարդ սինգոնիայի հիմնական ձեռքը յուրացնելու վարժություններ:

Միջին սինգոնիաներ: Գեկսագոնալ տրիգոնալ և տեսրագոնալ սինգոնիաներ: Գեկսագոնալ սինգոնիա: Պարզ ձեռք: Բերելի (ապատիտ) բյուրեղը, ձեռք, սիմետրիա, սիմվոլներ:

Տեսրագոնալ սինգոնիա: Պարզ ձեռք: Բյուրեղատանագային (ցիրկոնի) քարի ձեռքը, սիմետրիա, սիմվոլները: Տրիգոնալ սինգոնիա: Պարզ ձեռք, հրկաթափայլ բյուրեղներ: Կալցիտի, կվարցի, ձեռքի, ձեռք, համաչափություն, սիմվոլներ: Միջին սինգոնիաները մողելներով յուրացնելու վարժություններ: Ստորին սինգոնիաներ: Շեղանկյուն սինգոնիա: Պարզ ձեռք: Օլիվինի բյուրեղը: Առաջին, երկրորդ և երրորդ լինակութիներ: Տոպազի բյուրեղը: Նիստերի գոտին: Մոնոկլինային սինգոնիա: Գիպսի, ավգիտի, ամֆիբոլի բյուրեղները: Տրիգլին սինգոնիա: Դաշտային շպաթի բյուրեղը: Պարզ ձեռք: Երկվորյակներ: Ստորին սինգոնիաները մողելներով և բնական բյուրեղներով յուրացնելու վարժություններ:

3. Բյուրեղային նյութի ներքին կառուցվածքը

Հառելի գյուտալը: Մենագենյան ճառագայթների կիրառումը բյուրեղների ներքին կառուցվածքն ուսումնասուրելու համար: Բյուրեղային ցանցի տիպեր: Քիմիական մոլեկուլների և բյուրեղների հարցը:

4. Բյուրեղների գոյացումը, անը և լուծվելը

Բյուրեղային մարմին գոյացումը բնության մեջ և լաբորատոր պայմաններում (զատում հալած մասսաներից, զատում պնիկմատութիկան պրոցեսների ժամանակ, զատում լուծությներից և զատում լուծությներից և որպես պրոցեսների հետեւնք՝ տողակիացման

գոյացում): Բյուրեղների աճը: Կոնցենտրացիոն հոսանքներ: Բյուրեղների չափը: Բյուրեղների լուծվելը: Կերազման (ուռւություն) փիզուրներ: Երյուրեղների խօսական սիմետրիան: Զուգահետական և ջուխական կողմանը: Կրկնորդը (դաշտական) տարրերը:

5. Բյուրեղների փիզիկական հատկությունները

Օպտիկական հատկությունները: Պարզ և բիեռացրած ձևագայթ: Կրկնուկի ճառագայթաբեկման երևույթներ: Սովորական և արտասովոր ճառագայթ: Օպտիկական առանցք: Միասնացքավոր և երկառանցք բյուրեղներ: Նիկոլի պրիզման: Մասնիթություն բիեռացրած մանրազիտակի հետ: Պլեռխրոնիզմ:

Պիրո և պյիե-վոնեկտրականություն: Ծղթայանքի հարակցության երևույթները բյուրեղի մեջ թերթականություն (ըայնություն):

6. Պոլիմորֆիզմ և իզոմորֆիզմ

Գաղափար պոլիմորֆիզմի մասին: Պոլիմորֆիկական ձևափոխման օրինակներ (պիրիտի խմբեր, կալցիտ): Պոլիմորֆիզմի երևույթների գործնական նշանակությունը:

Իզոմորֆիկական խառնուրդների բնութագրումը նրանց հատկությունների վոփիսության անընդհատության հիման վրա (տեսակաբար կիրա, տեսակաբար ծալվալ, բեկման ցուցանիշ և այլն): Իզոմորֆիկական խառնուրդներ, իզոմորֆիկական խառնուրդների օրինակներ (պլագիոկլազներ): Գաղափար ջուխական աղերի մասին:

II. ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱՅԻ ԲԱԺԻՆ

Ներածության մաս

1. Առարկան և միներալոգիայի մեթոդները

Միներալոգիան որպես երկրի կեղևի քիմիա: Միներալոգիայի զարգացման հիմնական փուլերը: Նկարագրական և գենետիկական միներալոգիա: Միներալոգիայի կապը երկիրն ու առանձին մասերում գիտությունների հետ և նրա գործնական:

նշանակությունը: Միներալոգիական ուսումնասիրության մեջ թողները: Դիտողության և փորձի գերը միներալոգիայի մեջ:

2. Անդեանուր գաղափար միներալների և նրանց գիտեզիսի մասին

Գաղափար երկրագնդի տերմոնդինամիկ պատյանների մասին: Քիմիական տարրերի բաշխումը երկրի կեղևի մեջ: Տարածված և հազվագյուտ աւարրերը: Կլարկների աղյուսակը: Երկրի կեղեռում գտնվող քիմիական տարրերի զոնայի բաշխման պատճառները: Երկրի ներքին դրության և նրա միջուկի քիմիական բաղադրության հարցը: Երկրի երեսին և նրա կեղևի ավելի խոր մասերում կատարվող քիմիական պրոցեսների տարրեր բնույթը:

Միներալները որպես արդյունք ֆիզիկո-քիմիական պերոցիաների, որոնք տեղի ունեն երկրի կեղևի մեջ: Միներալների կազմը ըրջապատի ալայմանների՝ հետ և նրանց փոփոխությունը պայմանների փոփոխության կապակցությամբ: Միներալների զոյցաման պայմանները բնության մեջ, զատում հալված մասսաներից, զատում տաք և սառը լուծույթներից, զոյցում պնևմատուիզի, մետամորֆիզմի, հողմահարման և զիադենեղի ժամանակի: Միներալների ձևերը բնության մեջ: Միներալների պարագենեղինը: Պակվուորփաղների զոյցումը: Միներալների արտաքին նշանների ուսումնասիրությունը (ամրությունը, տեսակարար կշռը, փայլը, զույնը, զծերը, կտրվածքը, թերթականությունը, մազնիսային հատկությունները, բյուրեղային ձեր): Ամրության ցուցնակը:

3. Միներալների սիստեմատիկ տեսությունը քիմիական կլասիֆիկացիայի եիման վրա

4. Բնակտորային տարրեր

Ածխածնի խումբը, ալմազ և գրաֆիտ: Ծծումբ: Ռուկի, արծաթ, պղինձ, պլատին: Տելլուրային և կոսմիկական ընակտոր երկաթ: Թիղիկական հատկությունները, գենեզիսը, պարագենեղին, տարածման պայմանները և կարեռագույն հանքավայրերը:

5. Ծծմբային միացություններ

Ընդհանուր տեսություն ծծմբային միացությունների և նրանց կլասիֆիկացիան: Մետալլոր, առորիպիգմենտ և ծարրաքարի փայլուկ: Արծաթի փայլուկ, պղնձի փայլուկ, արծճի փայլուկ, ցինկի կեղծ փայլուկ, պիրոռոտին, կինաբար, մոլեբդենիտ: Սզատ հանքեր, խալկոպիրիտ: Պիրիտ, մարկազիտ, արսենոպիրիտ: Այդ հանքային միներալների քիմիկական բաղադրությունը, քիպիկական հատկությունները, գենեզիսը ու պարագենեղինը, նրանց արդյունաբերական օգտագործումը և կարեռագույն տեղավայրերը Սովետական Միության մեջ և արտասահմանում:

6. Օքսիդներ և ելույթափակներ

Թթվածնի դերը և նրա տարածումը երկրի կեղևում: Կորունդ և նրա տեսակները՝ առւրին, սաֆիր, հղկաքար (հայդակ): Կորունդի, ոստրինի և սաֆիրի բաղադրությունը, հատկությունները, գենեզիսը և պարագենեղինը: Երանց գործնական կիրառումը և կարեռագույն հանքավայրերը: Այլումինիտ, օքսիդի հիգրատները: Բոկսիտ, նրա բաղադրությունը, հատկություններն ու գոյցումը: Բոկսիտի կարեռագույն հանքավայրերը ՍՍՌՄ-ի մեջ և արտասահմանում:

Հեմատիտ (կարմիր երկաթաքար, երկաթի փայլուկ), նրա քիմիական բաղադրությունը, ֆիզիկական հատկությունները, գենեզիսը ու պարագենեղինը, փոփոխությունները երկրի կեղևի վրա և լիմոնիտի (գորշ երկաթաքար) զոյցումը: Լիմոնիտի ըլքնորոշումը և նրա կարեռագույն տեսակները (սոլիտային գորշ երկաթաքար, ճմի և ճային հանքեր, ապակեղլուխ և այլն): Կարուրագույն հանքավայրերը ՍՍՌՄ-ի մեջ և արտասահմանում: Կվարց, նրա գենեզիսի պայմանները, փիզիկական հատկությունները, տարածումն ու նշանակությունը որպես ապար առաջացնող միներալ: Կվարցի պոլիմորֆ տարբերությունը և նրա նշանակությունը որպես գեոլոգիական ջերմաչափի: Կվարցի գործնական կիրառումը: Կվարցի տեսակները (լիռնային բյուրեղ, ծխագույն կվարց, ամետիտ, վարդագույն կվարց և այլն) և նրանց հանքավայրերը ՍՍՌՄ-ի մեջ: Խալցետն և նրա փո-

փոխակները (սերգոլիկ, ազատ, կայծաքար): Ապաւ նրա բաղադրությունը, հատկությունները, գենեգիսը և գարեսրագույն փոփոխակները, սովորական և ազնիվ ոպաւ):

Պոլիագիտ և պիրացուզիտ, բազագրությունը, հատկությունները և ծագումը: Մարդանցային կոնկրեցիաների գոյացումը ժամանակակից ծովերի հատակում և նրանց գոնվելը անցած գերուգական էպոխաների նոտվածքային ապարներում (վարդեր և պարզունանիր): Միկրոօրգանիզմների մասնակցությունը մարդանցի գիտական մեջ: Մարդանցային հանգերի կարևորագույն վայրերը ՍՍՌՄ-ի մեջ:

Անգաքար (կաստերիտ): Նրա բաղադրությունը, Փիզիկական հատկությունները, գենեգիսը, պարագենեգիսը, գործնական նշանակությունը, կարեսրագույն հանգավայրերը:

7. Հալոփիդ միացություններ

Աղաքար (հալիտ), սիլվին, կարնալիտ: Այդ հանգերի քիմիական բաղադրությունը, ֆիզիկական հատկությունները, գենեգիսն ու պարագենեգիսը: Կուտակման պայմանները ներկայումս և բրածո աղերի կուտակների ծագումը: Եալիտական աղերի արգյունաբերական նշանակությունը: Աղաքարերի կարեսրագույն հանգատեղերը ՍՍՌՄ-ի մեջ: Սոլիկամսկի հանգավայրի հոմաշխարհային նշանակությունը: Ֆլուորիտ: Նրա հատկությունները, գենեգիսը, պարագենեգիսը, կիրառմը արդյունաբերության մեջ և կարեսրագույն հանգավայրերը:

Թթվածնաթին թթուիների Աղերը

8. Մեկուկիսանոց օփողների աղեր

Շպինել, մագնիտիտ և խրոմագոր երկաթաքար, նրանց քիմիական բաղադրությունը, ֆիզիկական հատկությունները, գենեգիսն ու պարագենեգիսը: Այդ հանգերի արդյունաբերական նշանակությունը և նրանց կարեսրագույն հանգավատեղերը ՍՍՌՄ-ի մեջ և արտասահմանում:

9. Կարբոնատներ

Ածխաթթվային ջրագուրի միացություններ: Մի շաբանագունակ և մի շաբանագունավոր կարբոնատներ: Հեղանագունալ և մի շաբանագունավոր՝ կալցիտ, մագնիտիտ, գործմիտ, սիդերիտ: Շեղանագունալ և մի շաբանագունավոր արագոնիտ, և ցերուսսիտ: Այդ միներալների քիմիական բաղադրությունը, Փիզիկական հատկությունները, գենեգիսը, պարագենեգիսը, տարածումը և գործնական կիրառումը: Խլանգական շպաթի կարեռագույն հանգատեղերը ՍՍՌՄ-ի մեջ և արտասահմանում: Զրային ածխաթթվային միացությունները, մալախիտ և ազուրիտ: Բաղադրությունը, հատկությունները, գենեգիսը, պարագենեգիսը: Մալախիտի կարեվորագույն հանգատեղերն Ուրալում:

10. Սլյվիկատներ

Կայծաքարի տարածումը երկրի կեղեռում և սիլիկատների խմբի նշանակությունը: Միլիկատների լնդհանուր տեսությունը և նրանց կլասիֆիկացիան:

ա) Օրոսուլիկատներ

Օլիվինի խումբը: Օլիվինի քիմիական բաղադրությունը, ֆիզիկական հատկությունները, գենեգիսը, պարագենեգիսը և փոփոխությունը երկրի երեսին:

Օլիվինի փոփոխակները և նրանց գործնական օգտագործումը: Խրիզոլիտ:

Սերպենտին (օձաքար), քիմիական բաղադրությունը, ֆիզիկական հատկությունները և գենեգիսը: Կարեռագույն փոփոխակները, ազնիվ սերպենտին և սերպենտինային ազբեստ: Նըրանց գործնական նշանակությունը և կարեռագույն հանգատեղերը: Ազբեստի բաժինովյան հանգավայրն Ուբալում: Նիկելյա սիլիկատներ՝ բեկինսկիտ, գարնիբերիտ:

բ) Մետասուլիկատներ

Մետասուլիկատների կարեռագույն ներկայացուցիչները, ամֆիբոլներ և ազգիտներ (պիրօկանեներ): Այդ հանգերի քիմիական բաղադրությունը, ֆիզիկական հատկությունները, գե-

նեղիսը և պարագենեղիսը, նրանց կարեռագույն փոփոխակները
և ապար գոյացնող նշանակությունը: Նրանց փոփոխությունը
երկրի երեսին:

Տալկ (Ճարպաքար): Բաղադրությունը, համկությունները,
ծագումը, կիրառումը արդյունաբերության մեջ և տարածումը:

Գ) Ալումոսիլիկաներ

Կ առ լ ի ն ի խ ո ւ մ բ ը

Կառլինի քիմիական բաղադրությունը: Կառլինի միջուկը և
նրա կառուցվածքային ֆորմուլան ըստ Վերնագսկու: Կավերի
ֆիզիկական հատկությունները: Կավերի գենեղիսը: Կառլինի
կուտակների գոյացումը: Կառլինի և կավերի գործնական շահա-
գործումը: Կառլինի հրակայուն կավերի կարեռագույն հանքա-
տեղերը ՍՍՌՄ-ի մեջ:

Դաշտային շպաթների խումբը

Դաշտային շպաթներ, նրանց քիմիական բաղադրությունը,
ֆիզիկական հատկությունները, գենեղիսը ու պարագենեղիսը:
Դաշտային շպաթների տարածումը և նրանց նշանակությունը
որպես ապար գոյացնող միներալների: Դաշտային շպաթների
կլասիֆիկացիայի սկզբունքները և կարեռագույն ներկայացու-
թեչները: Օրտոկլազ միկրոկլին, պլազիոկլազների խումբը որ-
պես իզոմորֆների խառնուրդ (ալբիտ, օլիգոկլազ, անդեղին,
լաբրագոր, անորտիտ): Դաշտային շպաթների փոփոխությունը:

Դաշտային շպաթների կիրառումն արդյունաբերության
մեջ: Կարեռագույն հանքատեղը ՍՍՌՄ-ի մեջ:

Ֆերգապատիտների

Ֆերգապատիտների կարեռագույն ներկայացուցիչները, նե-
րելին և լեյցիտ, նրանց քիմիական բաղադրությունը, ֆիզի-
կական հատկությունները, գենեղիսը, պարագենեղիսը, տարա-
ծումն ու գործնական կիրառումը:

Նոնաքարեր

Նոնաքարերի կարեռագույն ներկայացուցիչները, անդրա-
գիտ, ալմանդին, նրանց քիմիական բաղադրությունը, ֆիզիկա-
կան հատկությունները, գենեղիսը, պարագենեղիսը, տարածումն
ու գործնական կիրառումը:

Փայլարների խումբ

Քիմիական բաղադրությունը, ֆիզիկական հատկություն-
ները, գենեղիսը, պարագենեղիսը և կարեռագույն փոփոխակ-
ները՝ մուսկովիտ, լեպիդրիտ, ֆլոգոպիտ և բիոտիտ: Փայլար-
ները որպես ապար առաջացնող միներալներ: Փայլարների փո-
փոխությունը երկրի երեսին: Փայլարների գործնական օգտա-
կործումը և կարեռագույն հանքավայրերը ՍՍՌՄ-ի մեջ:

Քլորիտի խումբ

Քլորիտների քիմիական բաղադրությունը, ֆիզիկական
հատկությունները, գենեղիսը և պարագենեղիսը, նրանց կարե-
վորագույն փոփոխակները:

Այլ ալումոսիլիկատները, բերիլ, տուբմալին, տոպազ,
էպիդոտ, գլավիլոմիտ:

11. Տիտանատներ

Տիտանական երկաթաքար և սփեն, նրանց քիմիական բա-
ղադրությունը, ֆիզիկական հատկությունները, գենեղիսը և պա-
րագենեղիսը:

12. Նիտրատներ

Զիլիական բորակ կամ նիտրատային բորակ: Նրա գենե-
ղիսի տարբեր դեպքերը: Բակտերիաների դերը աղոտաթթվային
աղերի գոյացման մեջ: Նատրային բորակի կուտակումների գո-
յացման պայմանները Հարավային Ամերիկայում (Զիլի):

13. Ֆոսֆատներ

Ապատիտ: Նրա բաղադրությունը, հատկությունները, գե-
նեղիսը և պարագենեղիսը: Ֆոսֆորիտները, նրանց գենեղիսը և
գործնական կիրառումը: Խիբինի լեռների ապատիտները, Սովե-
տական Միության Եվրոպական մասի ֆոսֆորիտները և Կա-
զախստանի ֆոսֆորիտները: Ֆոսֆորիտների հանքատեղերը
Ալֆիրում և Ֆլորիդայում:

Մոնացիտ, նրա քիմիական բաղադրությունը, հատկությունները, գենեղիսը, պարագեննեղիսը և տարածումը: Հազվագյուտ տարրերի գանվելը մոնացիտի մեջ և նրանց նշանակությունը առորիի նիտրիտ, ցերիի օքսիդ և այլ հազվագյուտ հողեր ստանալու համար: Մոնացիտի ռադիակալիվ հատկությունը: Կարելորագույն հանքատեղերը: Մոնացիտի հանքի գոյացումը:

14. Սուլֆատներ

Անջուր ծծմբաթթվային միացություններ՝ բարիտը (ծանր շպաթ) և անհիդրիտ և ջրային ծծմբաթթվային միացություններ՝ գիպս և գլասուրերյան աղ: Այդ միներալների քիմիական բաղադրությունը, ֆիղիկական հատկությունները, գինեղիսը, պարագեննեղիսը, գործնական կիրառումը և կարելորագույն հանքատեղերը: Միրաբիլիտի նստելու պայմանները կարաբուգչում:

15. Վոլֆրամատներ և ուրանատներ

Վոլֆրամատ և շենկիտ: Ուրանային ինեժ, նրա նշանակությունը ուղիղ ձեռք բերելու մեջ: Վոլֆրամային և ուրանային հանքերի կարևորագույն վայրերը ՍՍՌՄ-ի մեջ և արտասահմանում:

16. Հանքային օրգանական միացությունների խումբը

Քարածուխ, նրա փոփոխակները, գենեղիսը և հանքատեղերը ՍՍՌՄ-ի մեջ:

Նավթը և նրա ծագումը, կարելորագույն հանքատեղերը ՍՍՌՄ-ի մեջ:

17. Միներալների գենետիկական կլասիֆիկացիան, միներալների սեսությունը ըստ գենետիկական խմբերի

Քաղաքար մագմայի մասին: Միներալների մագմայից դուրս թափվելու կարգն ու պայմանները: Կարելորագույն մագմատիկ միներալները: Գեզմատիտային, պնիկմատոլիտային և կոնստակային ծագումն ունեցող միներալները: Նրանց գոյացման պայմանները և կարելորագույն ներկայացուցիչները: Միներալ-

ների դատման առանձնահատկությունները պեպմատիտային երակներում: Պեպմատիտային երակների թանկագին քարերը՝ ըերիլները, տոպազ, տոռմալին:

Գաղերի յնդացման պրոցեսները հրաբուխներում և ցնդացման հնթարկվող հանքերը: անագային քար, մոլիբդենիտ, վոլֆրամիտ:

Հիգրոստերմալ երակների գոյացումը և հիգրոստերմների միներալները:

Մետասումատիկ միներալները և նրանց գոյացման նյութի աղբյուրները: Հողմահարման միներալները: Զրի, թթվածնի, ածխաթթվի և այլ գաղերի և օրգանիզմների դերը հողմահարման պրոցեսի ժամանակ:

Սառը լուծույթից ընկած նստվածքային ծագում ունեցող միներալները: Ջերմության, ճնշման և լուծույթի բաղադրության կանոնավորող դերը:

Օրգանոգին ծագում ունեցող միներալները: Օրգանիզմները որպես ցրված տարրերի կոնցենտրատներ: Օրգանիզմների գերը տարրերի գաղթումներում երկրի կեղեցի մեջ:

Մետամորֆիկ միներալները:

III. ՊԵՏՐՈԳՐԱՖԻԱՅԻ ԲԱԺԻՆ

1. Պետրոգրաֆիայի առարկան: Նրա գլխավորագույն բնուրոշումները: հորինվածքը, կազմվածքը, միներալոգիական և քիմիական բաղադրությունը, ծավալման ձեր, գենեղիսը: Ապարների կլասիֆիկացիան: Մագմատիկ, նստվածքային և մետամորֆիկ ապարներ: Նրանց համառոտ գեոլոգիական, միներալոգիական և ֆիզիկո-քիմիական բնորոշումները:

2. Մագմատիկ ապարները: Կլասիֆիկացիան ըստ գոյացման խորային, էֆֆուզիվ և հիպարիտալ: Մագմատիկ ապարների ծալալման (զալցանի) ձերը, բատոլիտ, լակլոլիտ, զանգվածային, զայկա, շերտավոր երակ, ծածկույթ, հեղճեղատ, գլմբեթ, նեկլի:

3. Մագմա: Նրա ֆիզիկո-քիմիական բնորոշումները: Մագմայի դժվարը և ճիշտ ցնդվոր կոմպոնենտները: Մագմատիկ ապարների գլխավորագույն քիմիական կոմպոնենտները: Ապար

առաջացնող միներալները, քիմիական, սովորական ակցեսուրական:

4. Մագմատիկ ապարների կառուցվածքը և նրանց նշանակությունը՝ գենեզիսը և կլասիֆիկացիան հասկանալու համար: Հատիկավոր կառուցվածքներ: Ծիրանաքարային կառուցվածք: Բժավորները (երգական), հիմնական մասսա:

Մագմատիկ ապարների միներալոգիական և քիմիական կլասիֆիկացիան: Մագմատիկ ապարների գլխավորագույն ընտանիքները:

Գլխավորագույն ապարների բնտանիքների սխալամատիկ տեսությունը

Տեսությունների ժամանակ դասախոսությունների մեջ տրվում են միներալոգիական բաղադրությունը, կառուցվածքը, ծավալման ձևը, հանքերի գոյացման պայմանները, այլև համառոտակի քննիչում են զրանց հետ կապ ունեցող բրածոները:

Գործնական աշխատանքներում մանրագիտակի միջով ուսումնասիրվում են ուսանելի ընտանիքների գլխավորագույն ներկայացուցիչները, նաև այդ ապարների բնորոշ շրջանների քարտեզագրական նյութը:

5. Պերիոդիտների ընտանիք, գաբրոների և բաղալաների ընտանիք:

6. Դիորիտանդեղիտների ընտանիք: Գրանիտ-լիպարիտների ընտանիք:

7. Սիհնիտ-տրախիտների և նեֆելինային սիհնիտների ընտանիք: Ճեղքած և ճեղքված երակային ապարներ: Պեղմատիտներ, ապլիտներ, լամպրոփիրներ:

8. Մագմայի շերտավորում: Մագմայի ստոչելու պրոցեսի ընթացքը: Լիկվացիա, բյուրեղացման շերտավորում: Բուռենի բեակցիոն սկզբունքը:

9. Սախմիլյացիա: Հիբրիտային ապարները: Ցնդող կոմպոնենտների գերը, Ալկալիական ապարների գոյացման թեորիան:

10. Նստվածքային ապարների բաժանումը յուրյանի և ցամաքայինի և գրանց բաժանումը քիմիականի, օրգանոգենների և բեկորայինի: Հիշյալ խմբերի ապարներին ծանոթանա-

լու: Քիմիական՝ սովորական կրաքար, ուլումիտ, կրային տուֆ, անէրզրիտ, գիպս, քարաղ, կալիումի աղեր: Օրգանոգեն՝ կրաքար, կալիճ, տրեպեր, տորֆ, քարածուխ, սապրոպել, վառվող թերթաքարեր:

11. Ծամաքային կիտվածքներին վերաբերող ապարներ՝ մորենա և նրա հողմանարման օրինակներ: Լյոսսանման կավագույններ, էոլյան, գելյուլիալ և պրոլյուվիալ ծագումով: Էլյուվիալ կիտվածքները: Էոլյան ալվաններ և էոլյան լյոսս:

12. Թացիալ կոմպեքսներ, որոնք բնորոշ են բևեռային, հարավային բարեխառն, սուբտրոպիկական և անապատային կլիմաների համար:

Մետամորֆիկ պրոցեսների հետ կապված հանքային գոյացություններ:

13. Մետամորֆիզմ: Մետամորֆիզմի տիպեր: Մետամորֆիկ ապարների բնորոշ կառուցվածքները: Ավտոմետամորֆիզմ, կոնտակտ և հիդրոտերմալ մետամորֆիզմ: Գրեյզեն, սկարն, եղջյուրաքար, մարմար:

14. Ռեզիսնալ մետամորֆիզմ: Գիտություն գոյաների մասին: Նստվածքային ապարների մետամորֆիզմը: Թերթաքարեր, գնեյսներ, մարմար, կվարցիտներ: Մագմատիկ ապարների մետամորֆիզմ: Թերթաքարեր, գնեյսներ, ամֆիբոլիտներ:

ԶԵՐՆԱՐԿՆԵՐ

1. **Годлевский.**—Краткий курс кристаллографии.

(«Բյուրեղագիտության համարակարգ»):

2. **Федоровский.**—Курс минералогии.

3. **Левинсон-Лессинг.**—Петрография.

Հայերեն.—Մալինկո ու Պատյոմիկն. —Գեոլոգիա և միներալոգիա (կրագարարի մասամբ):



2374

ՀՀ Ազգային գրադարան



NL0266306

11175